



«ԱՐՅԱՆ»
ԳԻՏԱՆՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՎԱՐԳ
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱՆԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
<ԱՄԱՆԱԿԱՆ>



ՄԵԴԻԱ
ԱՍՈՑԻԱՅԻՆ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 4(7), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4(7), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

**Ընթացիկ համարը նվիրվում է 2020թ. սեպտեմբերի 27-ին
աղբբեջանաթուրքական վարձկան հրոսակների սանձագերծած
պատերազմում Արցախի Սուրբ հողի քաջարի պաշտպաններին:**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՐԻՎԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ՉԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Միսսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԽՏԵՐՅԱՆՆՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎՍԵԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 4(7), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 280 էջ:

**«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 4-րդ (7-րդ) համարի տպագրության
աջակցել է «Մեդիա ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:**

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

*The current issue is dedicated to the brave defenders
of the Holy land of Artsakh in the war unleashed by
azerbaijani-turkish mercenaries on September 27, 2020.*

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,
Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (Lviv, Ukraine)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 4(7), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 280 pages.

The publication of the 4th (7th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «Media Association» LLC.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Текущий номер посвящен отважным защитникам
Святой земли Арцаха в войне, развязанной азербайджано-
турецкими наемниками 27 сентября 2020 года.*

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 4(7), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 280 страниц.

Публикация 4(7) номера 2020 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии ООО «Медиа ассоциация».

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Լուսինե Սուլեյմանյան. «Էլեկտրոնային ապացույցները» քրեական դատավարությունում.....73

Lusine Suleymanyan. «Electronic Evidence» in the Criminal Procedure

Лусине Сулейманян. «Электронные доказательства» в уголовном судопроизводстве

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

Հասմիկ Կիրակոսյան. Պարսկախոսությունը Շիրվանի հայ բնակչության շրջանում (ԺԸ. Դար).....83

Hasmik Kirakosyan. The Persophonie among Armenians of Shirvan (18th Century)

Асмик Киракосян. Персофония у армянского населения Ширвана (XVIII в.)

Վահե Հակոբյան. I'tikāf-ի ծիսակարգն ըստ սուննի կրոնաիրավական մազհաբների.....93

Vahe Hakobyan. The Ritual of I'tikāf According to Sunni Religious Legal Madhabs

Вале Акоюн. Ритуал «итикаф» в соответствии с религиозно-правовыми мазхабами

Արաքս Փաշայան, Նազելի Նավասարդյան. Շիայականության գործոնը ադրբեջանաիրանական հարաբերություններում..... 104

Araks Pashayan, Nazeli Navasardyan. Shia Factor in Azerbaijani-Iranian Relations

Аракс Пашаян, Назели Навасардян. Шиитский фактор в азербайджано-иранских отношениях

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

Աննա Ավագյան. Երևան քաղաքի ջրամատակարարման գնահատումը լատենտ փոփոխականի մոդելավորման միջոցով..... 114

Anna Avagyan. The Assessment of Yerevan Water Supply by Latent Variable Modeling

Анна Авакян. Оценка водоснабжения города Еревана с помощью моделирования латентной переменной

Եվգենյա Հայրիյան, Մարիա Անտոնովա. Բազել III-ի առնչությունները ՀՀ-ում ֆինանսական համակարգի կայունության ապահովման հետ..... 122

Yevgenya Hayriyan, Maria Antonova. Basel III Relations with Ensuring Financial System Stability in Armenia

Евгения Айриян, Мария Антонова. Отношения Базеля III с обеспечением стабильности финансовой системы в Армении

Հռիփսիմե Հովսեփյան. Ներքին աուդիտի ներհատուկ հիմնական ռիսկերը..... 133

Hripsime Hovsepyan. Main Inherent Risks of Internal Audit

Рипсима Овсепян. Основные риски, характерные для внутреннего аудита

Չավեն Մկրտչյան. Հանքարդյունաբերության զարգացման տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում..... 144

Zaven Mkrtychyan. Economic and Environmental Problems of Mining Industry Development in the Republic of Armenia and the Republic of Artsakh

Завен Мкртчян. Экономико-экологические проблемы развития горнодобывающей промышленности в Республике Армения и Республике Арцах

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԷԿՈՆՈԳԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱԴԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

ՉՏԴ 338.2

ՉԱԿԵՆ ՄԿՐՏԶՅԱԼ

*Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն,
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
zavenmkrtyan5@gmail.com*

Հոդվածի նպատակն է բացահայտել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Արցախի Հանրապետությունում հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտում տնտեսական գործունեության արդի հիմնախնդիրները: Այդ նպատակով կարևորվել է նշված տնտեսական գործունեության տեղն ու դերը ԳԳ-ում և ԱԳ-ում ստեղծված ավելացված արժեքի և ՀՆԱ-ի աճի ապահովման գործում: Կարևորվել է հատկապես հանքագործական արդյունաբերության զարգացման տնտեսական ու բնապահպանական հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը, և այդ առումով առաջարկվում է շրջակա միջավայրին հասցված վնասը փոխհատուցել հանքավայրերը շահագործող կապմակերպությունների միջոցների հաշվին:

Հետապոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես վիճակագրական, վիճակագրական շարքերի համադրության, այնպես էլ ձևական-տրամաբանական, համեմատական, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները:

Հետապոտության արդյունքում հանգել ենք այն ելրակացության, որ հանքարդյունաբերության ոլորտի ներկայիս անմխիթար վիճակը, հատկապես բնապահպանական միջոցառումների անտեսումը, պայմանավորված է գործող տնտեսա-իրավական օրենսդրության անկատարությամբ և անհասցեականությամբ, ինչպես նաև շրջակա միջավայրին հասցվող վնասի ոչ լիարժեք հաշվառմամբ: Այս ամենը շտկելու ճանապարհները հայտնի են, սակայն Հայաստանում ու Արցախում այդպիսի միջոցառումների ներդրման անհրաժեշտությունը շատ սուր է զգացվում:

Հիմնաբառեր՝ արդյունաբերություն, հանքագործական արդյունաբերություն, հանքավայր, ՀՆԱ, բնապահպանություն, տնտեսական լծակներ:

Ներածություն

Ամեն մի երկրի տնտեսության և դրա կառուցվածքի ձևավորման ու զարգացման հիմքում դրված են մի շարք գործոններ, որոնցից հատկապես կարևորվում է երկրում առկա արտադրական կապիտալն ու դրա օրգանական կազմը, աշխատանքային ռեսուրսներն ու դրանց որակավորման աստիճանը, բնական ռեսուրսները և դրանց կազմը, տվյալ երկրում արտադրա-տնտեսական հարաբերությունների բնույթն ու զարգացվածության աստիճանը, արտադրության տեխնոլոգիական հագեցվածության մակարդակը և կազմակերպման մշակույթը և մի շարք այլ գործոններ: Թվարկված

* Հոդվածը ներկայացվել է 06.09.2020թ., գրախոսվել՝ 14.09.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

գործոնները ըստ էության ձևավորում են երկրի ձեռնարկատիրական միջավայրը և դրանով իսկ պայմանավորում են տնտեսության զարգացվածության աստիճանը, ինչպես նաև բնութագրում են երկրի առկա ներուժն ու հնարավորությունները՝ ապահովելու բնակչության կենսամակարդակը: Թեև տեխնոլոգիաների ու նորարարությունների կիրառումը և մեծ չափերով տարածումը հատկապես վերջին 50-80 տարիների ընթացքում դարձել են համաշխարհային տնտեսության զարգացման շարժիչ ուժերից մեկը, այնուամենայնիվ դեռևս մեծ է երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակի կախվածությունը բնական ռեսուրսների առկայությունից և, առավել ևս, դրանց օգտագործման պայմաններից:

Ավելին՝ ներկայումս համաշխարհային տնտեսության մասշտաբով առանձնացվում են երկրներ, որոնց տնտեսությունները մասնագիտացել են և զարգանում են հիմնականում բնական ռեսուրսների օգտագործման շնորհիվ, ու այդ երկրներն ըստ էության դարձել են առավել զարգացած երկրների համար հումքի ու կիսաֆաբրիկատների մատակարարներ: Իրերի նման վիճակը պայմանավորված է կապիտալի (հատկապես հանքարդյունաբերության և մշակող արդյունաբերության ոլորտներում) ու երկրների աշխարհագրական տարածքներում բնական պաշարների անհամաչափ բաշխվածությամբ: Խոշոր հաշվով զարգացած երկրները, օգտագործելով զարգացող երկրների հանքահումքային պաշարները, իրենք են յուրացնում այդ պաշարների հիման վրա ստեղծված ավելացված արժեքը, ինչի հետևանքով մեծանում է անջրպետը զարգացած ու զարգացող երկրների տնտեսությունների ու բնակչության կենսամակարդակների միջև: Իսկ եթե նկատի ունենանք, որ հանքահումքային ռեսուրսներ մատակարարող երկրներում դրանց արդյունահանման ժամանակ զգալի վնաս է հասցվում բնությանը, որին հաջորդում են բնակչության շրջանում սոցիալական ու առողջապահական հետևանքները, ապա պարզ կդառնա, որ իրականում գործ ունենք անհամարժեք փոխանակության հետ, որը կատարվում է հանքահումքային ռեսուրսներ արդյունահանող, այդպիսի ռեսուրսներ մատակարարող և դրանք «ընդունող» երկրների միջև:

Այս տեսանկյունից բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որի տնտեսական համալիրի անբաժանելի մասն են կազմում հանքագործական արդյունաբերությունը և դրան հարակից տնտեսական գործունեության տեսակները: Ոլորտի կարևորությունը ընդգծելու համար բավական է նշել, որ հանրապետության հիմնական հարկատուների ցուցակում զգալի են հանքագործական արդյունաբերությունը ներկայացնող առևտրային կազմակերպությունները: Նման իրավիճակը զգալիորեն պայմանավորված է նախընթաց տարիներին ոլորտում կատարված մեծածավալ ներդրումներով: Այժմ էլ հանքագործական արդյունաբերությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման տեսանկյունից գրավիչ է և ունի զարգացման հեռանկարներ: Ուստի պատահական չէ նաև առանձին մասնագետների կողմից ՀՀ ընդերքի ներուժին (պոտենցիալին) տրված այն գնահատականը, որը այժմ գնահատվում է 25-30 մլրդ ԱՄՆ դոլարի չափով³⁶²: Կարևոր է նաև նկատել, որ հանրապետությունում ստեղծված ներկայիս տեխնոլոգիական և սոցիալ-տնտեսական պայմաններն առաջիկա տարիներին ևս կպայմանավորեն հանքագործական արդյունաբերության արտադրանքի արտահանումը որպես հանրապետության առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդի հաղթահարման հիմնական ուղիներից մեկը:

³⁶² Մարկոսյան Ա. Հանքագործական արդյունաբերության զարգացման արդի տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, «Սոփյալ քաղաքականությանը գործել. Բնապահպանական հիմնահարցերի և պաշարների կառավարման քաղաքականության ազատական մոտեցումներ» գրքում, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2012թ., էջ 50:

Սակայն հատկապես վերջին տարիներին նկատվող հանքագործական արդյունաբերության բուռն զարգացումը, առանձնապես մետաղային օգտակար հանածոների արդյունահանումը իր հետ բերում է նաև անցանկալի հետևանքներ, որոնցից ամենակարևորը բնապահպանականն է:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտը

Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է բազմաթիվ բնական ռեսուրսներով, այդ թվում մետաղական և ոչ մետաղական պաշարներով: Հայաստանի երրորդ Հանրապետության ձևավորման սկզբից ևեթ հանքարդյունաբերության ոլորտը տնտեսության շարժիչ ուժերից մեկն է, որի արտադրանքը հիմնականում արտահանվում է: Հանքարդյունաբերության զարգացման ծրագրերի իրականացումը, ելնելով ընդերքի ռացիոնալ օգտագործման ու բնապահպանական պահանջների սկզբունքներից, համարվում է Արցախի Հանրապետության տնտեսական զարգացման ու աճի կայուն տեմպերի ապահովման հիմնական ուղղություններից մեկը³⁶³: Գյուղատնտեսության, սննդի արդյունաբերության որոշ ճյուղերի, էլեկտրաէներգիայի արտադրության հետ միասին հանքարդյունաբերությունը ներկայումս Արցախի Հանրապետությունում համարվում է հեռանկարային, արտահանման ներուժ ունեցող ճյուղ:

Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է հետևյալ մետաղական օգտակար հանածոների տեսակներով՝ երկաթ, պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, ոսկի, արծաթ, ծարիր, այլումին, ինչպես նաև դրանցում պարփակված հազվագյուտ ու ցրված մետաղներով: Այդուհանդերձ զլորբալ մակարդակով վերցված՝ այս հանքավայրերը համեմատաբար փոքր են: Հայաստանի պղնձամոլիբդենային ամենախոշոր հանքավայրը Զաջարանում իր մեծությամբ աշխարհում զբաղում է մոտ 110-րդ տեղը, իսկ ոսկու ամենախոշոր հանքավայրը Սոթքում աշխարհի ոսկու 300 խոշորագույն հանքավայրերի ցանկից դուրս է³⁶⁴:

Ըստ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հրապարակած տեղեկատվության՝ օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված են հաստատված պաշարներով օգտակար հանածոների շուրջ 871 հանքավայրեր (43 մետաղական, 760 ոչ մետաղական, 44 ստորերկրյա քաղցրահամ և 24 հանքային ջրերի), ինչպես նաև օգտակար հանածոների 580 հանքերևակումներ (131 մետաղական և 449 ոչ մետաղական), օգտակար հանածոների ավելի քան 130 տեսակներ, որոնցից շուրջ 25-ը՝ մետաղական:

Հայաստանի Հանրապետության ընդերքը հարուստ է հետևյալ մետաղական օգտակար հանածոների տեսակներով՝ երկաթ, պղինձ, մոլիբդեն, կապար, ցինկ, ոսկի, արծաթ, ծարիր, այլումին, ինչպես նաև դրանցում պարփակված հազվագյուտ ու ցրված մետաղներով:

Մետաղական օգտակար հանածոների թվում առկա են 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 24 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 1 մոլիբդենային, 1 այլումինահանքային, 1 մագնեզիումասիլիկատային ապարների և քրոմիտի, 3 երկաթահանքային հանքավայրեր: Պետական հաշվեկշռում զրանցված հանքավայրերի հանքաբարերում, բացի հիմնական մետաղներից, բացահայտված է հազվադեպ և

³⁶³ Տե՛ս «Արցախի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր», էջ 131: Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն, <https://minfin-nkr.am/?section=resources/index&type=5&subtype=84>

³⁶⁴ Armenia - Strategic mineral sector sustainability assessment, Համաշխարհային բանկ, Washington D.C.: The World Bank Group, 2016, էջ 23:

ցրված տարրերի ամկայություն՝ ռեևիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիում, հելիում, թալիում, բիսմութ և այլն:

Ներկայումս Հայաստանի լեռնամետալուրգիական համալիրի համար վերջնական արտադրանքը հիմնականում խտանյութերն են (պղնձի, մոլիբդենի, ցինկի, որոշ դեպքերում ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ, մոտ հեռանկարում՝ նաև կապարի խտանյութեր), ինչը թույլ չի տալիս ամբողջովին օգտագործել հանքավայրերի տնտեսական ներուժը³⁶⁵:

Մետաղական օգտակար հանածոների գծով այժմ շահագործվող բոլոր հանքավայրերը՝ պղնձամոլիբդենային, պղինձ-հրաբարային, ոսկի-բազմամետաղային, ոսկի-սուլֆադային կազմավորման բոլոր հանքավայրերը շահագործվում են շատ ցածր արդյունավետությամբ, որն, ի դեպ, առաջադրվող նոր ընդերքի մասին օրենքը փորձում է կարգավորել: Այսօր թողարկվում են միայն կիսաարտադրանքներ (չհաշված մաքուր երկաթի գործարանում վերամշակվող մոլիբդենի խտանյութերը), որոնց պարունակած հիմնական մետաղները գնահատվում են շատ ցածր գնով, իսկ խտանյութեր անցած հիմնական տարրերի հետ հարակից տարածված շատ խիստ արժեքավոր տարրերը վաճառքի ժամանակ չեն գնահատվում, և դրանց արժեքները չեն փոխհատուցվում: Չեն գնահատվում նույնիսկ այնպիսի արժեքավոր տարրեր, ինչպիսիք են՝ մոլիբդենի հետ սերտորեն կապված և մոլիբդենից 130 անգամ թանկ ռենիումը: Չեն գնահատվում և նվիրվում են խտանյութեր անցած սելենը, տելուրը, բիսմութը, կադմիումը, գալիումը, գերմանիումը, ինդիումը, ծծումբը, երկաթը և այլն: Չի կորզվում նաև Քաջարանի հանքավայրում տարածված սկանդիում մետաղը, և երբ այդ բոլորը, ինչպես նաև դրանց 30-40 տոկոսի թերկորզման հետևանքով պոչամբարներ են թափվում հարյուրավոր ու հազարավոր տոննաներով ծանր մետաղներ ու թունավոր տարրեր՝ առաջացնելով էկոլոգիական աղետներ:

ՀՀ ՀՆԱ-ի արտադրության մեջ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտը 2015-2018 թվականներին կազմել է համապատասխանաբար 2.1%, 2.6%, 3.3% և 2.9%³⁶⁶: Ընդամենը արդյունաբերության մեջ այս ոլորտը կազմել է 2015թ.-ին՝ 14.7%, 2016 թ.-ին՝ 16.3%, 2017 թ.-ին՝ 18.6%, իսկ 2018 թ.-ին՝ 15.5%³⁶⁷: Հանքագործական արդյունաբերությունը զգալի դերակատարում ունի նաև Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման գործում: Աղյուսակ 1-ում բերված են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության արդյունաբերության, հանքագործական արդյունաբերության, բացահանքերի շահագործման և մշակող արդյունաբերության ոլորտների զարգացման արժեքային ցուցանիշները 2008-2019թթ.-ին:

Արցախի Հանրապետությունում արդյունահանված բնեղեն արտահայտությամբ հանքաքարի խտանյութը եթե 2014թ.-ին կազմել է 27.7 հազար տոննա, 2015 թ.-ին՝ 21.9 հազար տոննա, 2016թ.-ին՝ 30.2 հազար տոննա, 2017 թ.-ին՝ 84.1 հազար տոննա, ապա 2018թ.-ին՝ 116.0 հազար տոննա³⁶⁸: Նկատելի է նաև, որ Արցախի Հանրապետությունում 2014-2018թթ.-ին արդյունաբերության մասնաբաժինը ավելացված արժեքում կազմել է համապատասխանաբար 13.7%, 17.3%, 17.6%, 26.3% և 30.4%, իսկ արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում՝ համապատասխանաբար 12.9%, 16.4%, 16.9%, 24.9% և 28.5%³⁶⁹:

³⁶⁵ www.minenergy.am/page/472

³⁶⁶ Հայաստանի ազգային հաշիվները 2019, Եր., ՀՀ ՎԿ, 2019թ., էջ 47:

³⁶⁷ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, Եր., ՀՀ ՎԿ, 2019թ., էջ 273:

³⁶⁸ ԱՀ վիճակագրական տարեգիրք 2019, Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակարտ, 2019, էջ 195:

³⁶⁹ ԱՀ վիճակագրական տարեգիրք 2019, Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակարտ, 2019, էջ 191:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության արդյունաբերության, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման և մշակող արդյունաբերության ոլորտների զարգացման արժեքային ցուցանիշները 2008-2019թթ.-ին³⁷⁰

	Տարիները				
	2008	2010	2015	2018	2019
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլրդ դրամ					
Հայաստանի Հանրապետություն	739.3	824.4	1499.0	1937.5	2103.9
Արցախի Հանրապետություն	25.3	43.0	53.5	125.0	164.9
Ընդամենը	764.6	867.4	1552.5	2062.5	2268.8
Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արտադրանքի ծավալը, մլրդ դրամ					
Հայաստանի Հանրապետություն	93.3	145.5	220.8	300.7	356.3
Արցախի Հանրապետություն	10.4	19.7	12.9	69.3	62.9
Ընդամենը	103.7	165.2	233.7	370.0	419.2
Մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը, մլրդ դրամ					
Հայաստանի Հանրապետություն	509.0	544.8	999.6	1352.1	1468.7
Արցախի Հանրապետություն	9.2	14.2	21.6	28.4	70.8
Ընդամենը	518.2	559.0	1021.2	1380.5	1539.5
Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արտադրանքի տեսակարար կշիռը արդյունաբերական արտադրանքի մեջ, %					
Հայաստանի Հանրապետություն	12.6	17.7	14.7	15.5	16.9
Արցախի Հանրապետություն	41.0	45.7	24.2	55.4	38.1
Ընդամենը	13.6	19.0	15.1	17.9	18.5
Մշակող արդյունաբերության տեսակարար կշիռը արդյունաբերական արտադրանքի մեջ, %					
Հայաստանի Հանրապետություն	68.9	66.1	66.4	69.8	69.8
Արցախի Հանրապետություն	37.9	33.1	40.4	22.7	42.9
Ընդամենը	67.8	64.4	65.8	66.9	67.9

Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերության մասնաբաժինը ավելացված արժեքում 2014-2018թթ.-ին կազմել է համապատասխանաբար՝ 18.0%,

³⁷⁰ Աղբյուրը՝ արդյունաբերության զարգացման և հաշվարկվել է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ՎԿ, 2020թ., էջ 11-12, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, Եր., ՀՀ ՎԿ, 2019թ., էջ 271, 273, 280, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, Եր., ՀՀ ՎԿԾ, 2012թ., էջ 258-259, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, Եր., ՀՀ ՎԿԾ, 2010թ., էջ 262-263, Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019թ. հունվար-դեկտեմբերին, Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակարտ, 2020, էջ 12, Արցախի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2019, Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակարտ, 2019, էջ 194, 195, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2008-2014, Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակարտ, 2015, էջ 164-ի տվյալներով:

18.2%, 19.8%, 20.7% և 20.5%, իսկ արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ում դիտարկվող տարիներին՝ 16.0%, 16.3%, 176.9%, 18.5% և 18.4%³⁷¹:

Վերը բերված թվերը ակնհայտորեն վկայում են, որ Արցախի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության համեմատությամբ ինչպես արդյունաբերության մասնաբաժինը, այնպես էլ հանքարդյունաբերության և բացահանքերի շահագործման տնտեսական գործունեության տեսակը աճել են ավելի մեծ տեմպերով և սոցիալ-տնտեսական զարգացման համար վերածվել են զարգացման վճռորոշ գործոնի:

Հայաստանի Հանրապետությունում մետաղական հանքաքարի արդյունահանման մասնաբաժինը հանքագործական արդյունաբերության ու բացահանքերի շահագործման արդյունաբերության մեջ մշտապես գերակշռող մաս է կազմել: Վերջին տարիների պատկերը հետևյալն է. 2015 թ.-ին մետաղական հանքաքարի արդյունահանման արտադրանքի ծավալը հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման արդյունաբերության մեջ կազմել է 97.6% (կամ 215.5 մլրդ դրամ 220.8 մլրդ դրամից), 2016 թ.-ին՝ 97.3% (251.1 մլրդ դրամ 256.6 մլրդ դրամից), 2017 թ.-ին՝ 97.4% (332.3 մլրդ դրամ 341.1 մլրդ դրամից), իսկ 2018 թ.-ին՝ 95.5% (287.3 մլրդ դրամ 300.7 մլրդ դրամից)³⁷²: Իր հերթին հիմնային մետաղների արտադրությունը (արդյունահանումը) հիմնականում կենտրոնացած է պղնձի արդյունահանման և պղնձի խտանյութի արտահանման վրա: Պղնձի խտանյութի արդյունահանման ծավալները, օրինակ, շեշտակիորեն ավելացել են: Այսպես, եթե 2005թ.-ին արդյունահանվում էր 62843 տոննա խտանյութ, 2009թ.-ին՝ 88339 տոննա³⁷³, ապա 2015-2018 թվականների ընթացքում արդյունահանման ծավալներն ունեցել են հետևյալ պատկերը. 2015թ.-ին՝ 315599 տոննա, 2016 թ.-ին՝ 388534, 2017 թ.-ին՝ 428529, 2018 թ.-ին՝ 317357 տոննա³⁷⁴: Իսկ 2019 թ.-ին այն կազմել է 400 հազար տոննա՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով 126%-ով³⁷⁵, իսկ 2005 թ.-ի ցուցանիշը՝ 6.4 անգամ:

Այդուսակ 2-ում ներկայացված են հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման հիմնական ցուցանիշները Հայաստանում և Արցախում 2014-2018 թթ.-ին, որոնք վկայում են հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների ինչպես թվի, այնպես էլ արտադրության ծավալների կայուն աճի մասին:

Այդուսակ 2

Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման հիմնական ցուցանիշները Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում 2014-2018թթ.-ին³⁷⁶

	2014		2015		2017		2018	
	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ
Կազմակերպությունների թիվը, միավոր	72	14	74	23	80	22	97	21
Արտադրանքի ծավալը, մլրդ	193.4	14.6	220.8	12.9	341.1	52.1	300.7	69.3

³⁷¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, Եր., ՀՀ ՎԿ, 2019թ., էջ 271:

³⁷² Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, Եր., ՀՀ ՎԿ, 2019թ., էջ 273:

³⁷³ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, Եր., ՀՀ ԱՎԾ, 2010թ., էջ 284:

³⁷⁴ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, Եր., ՀՀ ՎԿ, 2019թ., էջ 300:

³⁷⁵ Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2019 թվականի հունվար-դեկտեմբերին, Վիճակագրական տեղեկագիր, Եր., ՀՀ ՎԿ, 2020թ., էջ 4:

³⁷⁶ Աղբյուրը՝ այդուսակը կազմվել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2019, Եր., ՀՀ ՎԿ, 2019թ., էջ 273, 276, 282, 285 և ԱՀ վիճակագրական տարեգիրք 2019, Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակարտ, 2019, էջ 201:

դրամ								
Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %-ով նախորդ տարվա նկատմամբ	92.4	134.8	146.8	87.4	114.9	263.4	85.6	134.7
Արդյունաբերարտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը, մարդ	8000	1504	9200	1628	8700	1270	8900	1379
Արդյունաբերարտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը, %-ով նախորդ տարվա նկատմամբ	99.8	103.3	115.0	108.2	103.5	90.4	102.3	108.6

Հանքարդյունաբերության զարգացման վիճակը և հիմնախնդիրները

Չնայած երկրների ՀՆԱ-ի համար կարևորությամբ, ընդերքօգտագործման և հատկապես բացահանքերի շահագործման ոլորտում առաջանում են մի շարք հիմնախնդիրներ՝ ոչ միայն արտադրության կազմակերպման, այլ նաև բնապահպանության հետ կապված, որոնք իրենց հերթին խոչընդոտում են հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանը երկրի ինչպես ընթացիկ, այնպես էլ երկարաժամկետ զարգացման հեռանկարում:

Ասվածի լավագույն ապացույցն է Ամուլսարի ծրագրի իրականացումը, որը ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հանդիպել է բնապահպանական հզոր շարժման, ինչն է ըստ էության կասեցրել է ոսկու արդյունահանումը նշված հանքավայրից: Չնայած այն հանգամանքին, որ Ամուլսարի հանքավայրի շահագործումը շուրջ տասը տարվա ընթացքում կարող է ապահովել 3 մլրդ ԱՄՆ դոլարի չափով ՀՀ ՀՆԱ-ի ավելացում, կամ տարեկան 200-220 մլն ԱՄՆ դոլարի միջին տարեկան աճ (միայն այդ գործոնի հաշվին կարող է ապահովվել ՀՀ ՀՆԱ-ի տարեկան 1.3-ից 1.4 տոկոս աճ, ինչպես նաև արտադրությունում ընդգրկված 750 մարդու զբաղվածություն), այն զուտ բնապահպանական շահերի տեսանկյունից իրավացիորեն հանդիպել է բնապահպանական լուրջ հիմնախնդիրների, որոնք կապված են ոչ միայն ներկա, այլ նաև ապագա սերունդների ինչպես կենսագործունեության, այնպես էլ ընդհանրապես գոյության հետ: Ակնհայտ է, որ ՀՀ-ում հատկապես մետաղական հանքավայրերի շահագործման հետ կապված լուրջ խնդիր ունենք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և բացասական հետևանքների չեզոքացման միջոցառումների բնագավառում: Պարզ է նաև, որ խնդիր կա բնապահպանական միջոցառումների հետ կապված ինչպես օրենսդրության կատարելագործման ոլորտում, այնպես էլ շրջակա միջավայրի պահպանության կազմակերպման հետ կապված: Ակնհայտ է, որ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԱՅ-ում հանքագործական արդյունաբերության զարգացումը պետք է ընթանա՝ հաշվի առնելով առաջին հերթին շրջակա միջավայրի պահպանության պահանջները, հատկապես հանքավայրերի հարակից ազդակիր համաքների բնակչության առողջապահության պահպանությունը:

Բացի այդ, ներկայումս և՛ Հայաստանի Հանրապետությունում և՛ Արցախի Հանրապետությունում բոլոր մետաղական հանքավայրերը շահագործվում են բաց և պայթեցման եղանակով, ինչի արդյունքում աղտոտվում են ջրային ավազանները և հողային ռեսուրսները, մինչդեռ աղտոտման համար հանքարդյունահանող ընկերությունները պետական բյուջե վնասները չեզոքացնելու նպատակով անհրաժեշտ ծավալներով վճարումներ չեն կատարում: Նկատվում է նաև նշված տարածքներից

Էկոլոգիական միգրացիա կամ ստեղծվում է իրավիճակ, երբ մարդիկ ստիպված բնակվում են նման էկոլոգիական աղետի շեմին հասած տարածքներում:

ՀՀ-ում տնտեսական աճը և բնակչության բարեկեցությունը զգալի կախման մեջ են դրվել բնական ռեսուրսների շահագործումից, և ՀՆԱ-ի աճ ապահովելու համար անխնա շահագործվում են ընդերքի հանածոները: Հանքարդյունահանման գործընթացներն ընթանում են՝ վտանգելով շրջակա բնական միջավայրն ու հարակից տարածքների մարդկանց առողջությունը, ինչպես նաև խոչընդոտում տնտեսության համար ազգային մրցունակության հեռանկար ունեցող այլ ճյուղերի՝ տուրիզմի ու գյուղատնտեսության զարգացմանը:

Այսպես, 2019թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված և գործողության մեջ գտնվող ընդերքօգտագործման իրավունքների (լիցենզիաների) թիվը կազմել է 384, իսկ ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների թիվը 30-ն է³⁷⁷: Նույն պահի դրությամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության տրամադրած ընդերքօգտագործման իրավունքների թիվը կազմել է 45, որից 3-ը նավթի ու գազի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար տրամադրված արտոնագրերն են³⁷⁸:

Հանքարդյունահանող ընկերություններն աշխատում են բացարձակ արտոնյալ պայմաններում (եթե համեմատում ենք մյուս՝ զարգացած երկրներում գործող ընկերությունների հետ)՝ շրջակա միջավայրը աղտոտելով և հասցված վնասի դիմաց վճարելով անհամաչափ փոքր գումար:

ՀՀ-ում չկան պետական ընդերքօգտագործող ընկերություններ, և արդյունաբերությունն ամբողջովին գտնվում է մասնավոր հատվածի տիրապետության տակ: Ռուսական ծագումով ընկերությունները շահագործում են հանքավայրերի զգալի մասը, այդ թվում՝ Կապանի ոսկու հանքավայրը (Polymetal International PLC), Սոթքի ոսկու և Ագարակի պղնձամոլիբդենային հանքավայրերը (Geopromining) և Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը (Vallex Group): Կան նաև Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հետ կապված ընկերություններ, սակայն դրանց իրական ծագումը բացահայտելը հիմնականում խնդրահարույց է: Ռուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մետաղական հանքավայրերը շահագործող ընկերությունների մեծ մասը գրանցված են օֆ-շորային տարբեր գոտիներում կամ փոխկապակցված են դրանցում գրանցված ընկերությունների հետ³⁷⁹:

Հանքարդյունաբերության զարգացումը պայմանավորված է ներքին ու արտաքին գործոններով: Ընդ որում, արտաքին կախվածությունն էական է՝ պայմանավորված հումքի համաշխարհային շուկայում մետաղների գներից, որոնք էլ սովորաբար դրսևորում են անկայուն, անկանխատեսելի վարքագիծ:

Հանքարդյունահանումը ցիկլային բիզնես է, որտեղ ապրանքների գները տատանվում են այսպես կոչված «գերցիկլային» հաճախականությամբ, ինչն իր հերթին կարող է տևել մեկ կամ մի քանի տասնամյակ: Վերջին մի քանի տարիներին (2011 թ.-ից ի վեր) տեղի է ունեցել ապրանքների գների աճի դանդաղում ու նվազում, իսկ ներկայումս ներդրողների հետաքրքրությունը հանքային ոլորտի նկատմամբ համեմատաբար ընկել է:

Ներքին գործոններով պայմանավորված՝ հանքարդյունաբերության ազդեցությունը զգալի է տնտեսության, սոցիալական և բնապահպանական ոլորտների վրա:

³⁷⁷ Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, <http://www.minenergy.am/page/422>

³⁷⁸ Նույն տեղում:

³⁷⁹ **Իշխանյան Ա. և այլք**, Civil Society, Development and Environmental Activism in Armenia (Yerevan, Armenia: City House Print, 2013), էջ 71-72:

Հանքարդյունաբերության ազդեցությունը երկրի սոցիալական, բնապահպանական և առողջապահական ոլորտների վրա ինչպես դրական, այնպես էլ բացասական է: Դրական ազդեցությունն այն է, որ այն ստեղծում է աշխատատեղեր մարզերում՝ ապահովելով համեմատաբար բարձր եկամուտներ գյուղական համայնքների բնակչության համար: Տեղական քյուլջեներ վճարված հարկերի շնորհիվ այն նաև հնարավորություններ է տալիս ազդակիր համայնքներին՝ լուծելու համայնքների առջև ծառայած խնդիրները: Սակայն դրան զուգահեռ՝ ոչ պատշաճ գործունեության արդյունքում հանքարդյունաբերությունը ստեղծել և շարունակում է ստեղծել բնապահպանական ու առողջապահական խնդիրներ:

Նմանատիպ խնդիրների լուծման համար միջազգային ասպարեզում պարբերաբար առաջարկվում են ոլորտի կարգավորման նոր մոտեցումներ, մեխանիզմներ ու տեխնոլոգիաներ՝ բնապահպանական ոլորտի օրենսդրությամբ սահմանված պահանջների վերանայում, ընդերքօգտագործման թափոնների կրկնակի վերամշակման հնարավորությունների ստեղծում, օգտակար հանածոների արդյունահանված տարածքների վերականգնման և ընդերքօգտագործման թափոնների կառավարման մեխանիզմների կատարելագործում, որոնք թույլ են տալիս ապահովել հանքարդյունաբերության կայուն զարգացում, այն է՝ նաև տնտեսական, սոցիալական ու բնապահպանական կայունություն:

ՀՀ-ում մետաղական օգտակար հանածոների արդյունահանման գործող ծրագրերից ոչ մեկը չի կարելի համարել էկոլոգիապես կայուն: Հիմնական խնդիրները պայմանավորված են հետևյալով.

ա) մետաղական օգտակար հանածոներ արդյունահանող փոքր ընկերությունները, որոնք ընդգրկված են խորհրդային շրջանում հայտնաբերված հանքավայրերի վատ կառավարվող արդյունահանման/հետախուզման ծրագրերում, զգալի վնաս են հասցնում շրջակա միջավայրին,

բ) հանքերի գործունեության և վերամշակման աշխատանքների հետևանքով առկա է օդի ու ջրի զգալի, շարունակական աղտոտվածություն,

գ) ընդհանուր առմամբ, չկան համապատասխան ծրագրեր ու ֆինանսական միջոցներ, որոնք անհրաժեշտ են հանքերի տեղամասերի, պոչամբարների վերականգնման և մեխորացիայի համար: Բնության ու շրջակա միջավայրի պահպանման դրամագլխի միջոցները բավարար չեն նպատակին ծառայելու համար, իսկ նախկինում նախքան մասնավորեցումը, պետությանը պատկանած հանքերի դեպքում գոյություն չունի պետության և նոր սեփականատիրոջ միջև պարտավորությունների բաշխման ֆորմալ կարգավորում,

դ) բարձր սեյսմիկ ռիսկի և հողի անկայունության հետ կապված ընդհանուր ռիսկի պայմաններում չափազանց մեծ է վտանգը, որ պոչամբարները (իսկ ՀՀ տարածքում առկա է օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացած թափոնների կուտակման 21 պոչամբար, որոնց ծավալներն անցնում են մի քանի մլն խմից և զբաղեցնում են մոտ 700 հա ընդհանուր մակերես)³⁸⁰ կարող են փլվել կամ վթարվել պոչամբարների շինարարության ժամանակ ոչ համարժեք մեթոդի կիրառման հետևանքով (հին՝ «վերընթաց բարձրացման» մեթոդով նախագծերի կիրառում),

ե) ոչ մետաղական և մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ոլորտում շահագործված տարածքների վրա սովորաբար վերականգնման կամ հողաբարելավման զգալի աշխատանքներ չեն կատարվում:

Մտահոգության տեղիք են տալիս հանքերի արդյունաբերական շահագործման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասները: Նման ռիսկերի նվազեցման գործիքները պետք է ներառեն բնական հանածոների արդյունահանումը սահմանափակող

³⁸⁰ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, <http://www.minenergy.am/page/472>:

կանոնների խստացումը, արդյունահանող ընկերությունների կողմից բնությանը հասցված վնասի մեղմման և դրանց վերացման ֆինանսական երաշխիքների տրամադրումը, ժամանակակից տեխնոլոգիաների և մոնիտորինգի ու գնահատման համակարգերի կիրառումը: Հաշվի առնելով հանքարդյունաբերության ազդեցությունը տեղական համայնքների վրա արդյունքի արդարացի բաշխման անհրաժեշտությունը՝ առաջնային խնդիրն է սոցիալական ռիսկերի մեղմումը:

Միայն օրենքների ու նորմատիվ ակտերի առկայությունը հաճախ բավարար չէ՝ մեղմելու թվարկված բոլոր ռիսկերը: Պետությունը պետք է զարգացնի կարգավորման և տեխնիկական փոխհատուցման իր կարողությունները: Վերջապես, ռիսկերի շուրջ խնդիրներ առաջանալու դեպքում (այդ թվում՝ թե ով պետք է դրանք կրի) անհրաժեշտ է ունենալ լուծման արդյունավետ մեխանիզմներ և ինստիտուտներ, որոնք թույլ կտան հաշվի առնել բոլոր կողմերի շահերը:

Եզրակացություն

Ինչպես վկայում է հանքարդյունաբերության զարգացման և պետական կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրությունը, այդ թվում՝ ՀՀ-ում և ԱՀ-ում ուսումնասիրվող ոլորտի փորձը, ոլորտում տնտեսա-Էկոլոգիական հիմնախնդիրների լուծման կիզակետում պետք է դրվեն առաջին հերթին տնտեսական լծակներ, և հանքարդյունաբերական կազմակերպությունները պետք է իրենց գործունեության համար առաջին հերթին կրեն տնտեսական պատասխանատվություն: Այդպիսի պատասխանատվության հիմքում պետք է դրվի շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասը (այդպիսի վնասը որոշակի մեթոդաբանությամբ չափելուց հետո), և դրա փոխհատուցումը պետք է կրի հանքարդյունահանող կազմակերպությունը: Միայն այդպիսի կարելի է հասնել տնտեսական ու Էկոլոգիական շահերի ներդաշնակեցմանը, քանի որ մեր առաջարկության դեպքում հստակ կորոշվի վնասի չափը և այդ վնասի հատուցումը ապահովող տնտեսավարող սուբյեկտը:

ECONOMIC AND ENVIRONMENTAL PROBLEMS OF MINING INDUSTRY DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA AND THE REPUBLIC OF ARTSAKH

ZAVEN MKRTCHYAN

*Ministry of Territorial Administration and Infrastructure
of the Republic of Armenia,
National Polytechnic University of Armenia, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to study the actual problems in the mining industry and the development of mineral deposits in the Republic of Armenia and in the Republic of Artsakh, as well as the state and prospects of economic activity in these sectors. For this, we have investigated the role and significance of these types of economic activities in the creation of added value and in the structure of GDP both in the Republic of Armenia and in the Republic of Artsakh. The need to solve the economic and environmental problems of the mining industry development was especially emphasized, in connection with which we propose the creation of such economic and legal frameworks so that the damage caused to the environment is compensated for at the expense of commercial organizations operating the deposits.

In the course of the study, we used the methods of statistical analysis, compilation of statistical series to study the key indicators of the industry; we also used formal-logical, comparative methods of analysis and methods of induction and deduction.

As a result of the study, we came to the conclusion that the current unfavorable state in the mining industry, when environmental measures are often ignored, is due to the imperfection of the current economic and legal legislation, as well as the lack of a method for determining and fully accounting for damage to the environment. The author points out the ways of possible changes and the need to introduce measures aimed at improving the situation in the mining industry of the republics.

Key words: industry, mining industry, mineral deposits, GDP, ecology, economic levers.

ЭКОНОМИКО-ЭКОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ПРОМЫШЛЕННОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И РЕСПУБЛИКЕ АРЦАХ

ЗАВЕН МКРТЧЯН

*министерство территориального управления
и инфраструктур Республики Армения,
аспирант Национального политехнического университета Армении,
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является изучение актуальных проблем в горнодобывающей промышленности и разработке месторождений полезных ископаемых в Республике Армения и в Республике Арцах, а также состояния и перспектив осуществления экономической деятельности в данных отраслях. Для этого нами исследованы роль и значение этих видов экономической деятельности в создании добавочной стоимости и в структуре ВВП как в Республике Армения, так и в Республике Арцах. Особо подчеркнута необходимость решения экономических и экологических проблем развития горнодобывающей промышленности, в связи с чем нами предлагается создание таких экономико-правовых основ, чтобы ущерб, нанесённый окружающей среде, возмещался за счёт коммерческих организаций, эксплуатирующих месторождения.

В ходе исследования нами применялись методы статистического анализа, составления статистических рядов для изучения ключевых показателей отрасли, использовались также формально-логические, сравнительные методы анализа и методы индукции и дедукции.

В результате исследования мы пришли к заключению о том, что нынешнее неблагоприятное состояние в горнодобывающей отрасли, когда зачастую игнорируется проведение природоохранных мероприятий, обусловлено несовершенством действующего экономического и правового законодательства, а также отсутствием методики определения и полного учёта ущерба, наносимого окружающей среде. Автор указывает пути возможных изменений и необходимость введения мер, направленных на улучшение ситуации в горнодобывающей промышленности обеих республик.

Ключевые слова: *промышленность, горнодобывающая промышленность, месторождение полезных ископаемых, ВВП, экология, экономические рычаги.*